Արձանագրություն 4

«Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ-ի կարիքների համար «ԲԷՑ-ԳՀԾՁԲ-21/04» ծածկագրով գնանշման հարցման ձևով գնումներ կատարելու գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

Գնահատող հանձնաժողովի նիստը տեղի ունեցավ 22.02.2021թ. ժամը 10:00-ին:

Մասնակցում էին՝
Հանձնաժողովը նախագահող՝

Գևորգ Մուրադյան - Հաշվապահական հաշվառման բաժնի պետ-գլխավոր հաշվապահ (ԳՊ/ԳԱ)

Հանձնաժողովի անդամներ՝

Տիգրան Ներսիսյան - Ֆինանսական բաժնի գլխավոր մասնագետ (ԳՊ/ԳԱ)

Վահե Գարեգինյան - Ֆինանսական բաժնի գլխավոր մասնագետ (ԳՊ/ԲԱ)

Մանուշակ Հակոբյան - Հաշվապահական հաշվառման բաժնի հաշվապահ (ԳՊ/ԲԱ)

Գնումները համակարգող՝

Դավիթ Գասպարյան - Գնումների և մատակարարման բաժնի գլխավոր մասնագետ

Բացակայում է հանձնաժողովի նախագահ՝ Գոռ Մարտիրոսյանը: Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526–Ն որոշմամբ հաստատված կարգի 26-րդ կետի առաջին ենթակետը՝ գնահատող հանձնաժողովի նիստը նախագահում է հաշվապահական հաշվառման բաժնի պետ-գլխավոր հաշվապահ Գևորգ Մուրադյանը:

Օրակարգ

Հայտերի գնահատման նիստի մասին

Հիմք ընդունելով 11.02.2021թ. «Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ-ի կողմից ներկայացված հարցմանն ի պատասխան Վերակառուցման և զարգացման միջազգային բանկի 19.02.2021թ. ստացված նամակը՝ ըստ որի «Բի-Դի-Օ Արմենիա» ՓԲԸ-ի, «Գրանթ Թորնթոն Աուդիտ» ՍՊԸ և «Գրանթ Թորնթոն» ՓԲԸ կոնսորցիումի կողմից ներկայացված աուդիտորական հաշվետվությունը ընդունելի կհամարվի բանկի համար, իսկ «Քրոու ընդ Ասատրյանս» ՍՊԸ-ն ներառված չէ բանկի կողմից իրավասու աուդիտորների ցանկում և նրա կողմից ներկայացված աուդիտորական հաշվետվությունը ընդունելի չի համարվի բանկի համար, ինչը չի բավարարում հրավերի պահանջներին:

1. ***Գնումների մասին ՀՀ օրենսդրության պահանջների համաձայն հանձնաժողովը որոշեց.***

1.1 Ղեկավարելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 40-րդ կետով՝ «Քրոու ընդ Ասատրյանս» ՍՊԸ -ի հայտը գնահատել անբավարար և մերժել:

1.2 «ԲԷՑ-ԳՀԾՁԲ-21/04» ծածկագրով ընթացակարգի հաղթող մասնակից ճանաչել երկրորդ տեղ զբաղեցրած «Գրանթ Թորնթոն Աուդիտ» ՍՊԸ և «Գրանթ Թորնթոն» ՓԲԸ կոնսորցիումին, որին

սահմանված կարգով, անգործության ժամկետի ավարտից հետո, կառաջարկվի կնքել համապատասխան պայմանագիր:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 4, դեմ – 0

Գնահատող հանձնաժողովը նախագահող՝ Գևորգ Մուրադյան

Հանձնաժողովի անդամներ՝

Տիգրան Ներսիսյան

Վահե Գարեգինյան

Մանուշակ Հակոբյան

Գնումները համակարգող՝ Դավիթ Գասպարյան